Գ. Բալայեան (դաշ.). — Գոնէ լռեցէք, ամօ՛թ է ձեզ:

Լ. Թումանեան. — Այո՛, պէտք է հեռանայ նաև հայկական «Մուսաւաթը», եթէ չի ցանկանում, որ բռնի ուժով հեռացնեն նրան (ծիծաղ Դաշնակցութեան ֆրակցիայի կողմից):

Ա. Յովհաննիսեան (դաշ.). — Ահա երկու տարի է, մուսաւաթական կառավարութեան ձեռքով արնաքամ է լինում հայ ժողովուրդը. դուք, պարոնայք էսէրներ, հերքեցէք, որ հարիւրաւոր հայ տղաներ թրկատուած՝ չեն դտնուում Դահնա գիւղում, հերքեցէք, որ Ճալէթ, Վարդաշէն և ուրիշ շատ գիւղեր սրի չեն քաշուած, հերքեցէք, որ բազմաթիւ հայ կանայք ու աղջիկներ գերուած չեն ու բռնաբարուած, որ աւերուած չէ Շուշու հայկական մասը, որ չէ սրածուում Ղարաբաղի անմեղ ժողովուրդը:

Պատգամաւոր Լ. Թումանեանը ողջունում է այժմ Ազրբէջանի խորհրդային, ես կասեմ խորհրդաւոր իշխանութիւնը. ես ձեզանից առաջ կարող էի ողջունել, պ. Թումանեան, բայց ո՞ւր է նրա հրովարտակը, որ ազատէ մեր գերիներին ու բռնաբարուած կանանց և աղջիկներին, ո՞ւր է նրանց կոչը համերաշխութեան: Ուսուլբէկովի տեղ Նարիմանովին նստեցնելով փոխե՞ց էութիւնը:

Դուք երեսով էք տալիս, որ մենք ծափահարել ենք խմպերիալիստներին, բայց ո՞ւմ էիք ծափահարում դուք. մոռացել էք Միրքասիին (ծափեր), մոռացե՞լ էք, որ քանդում էիք Պետրոգրադի ջրմուղները (բուռն ծափեր). դուք չէի՞ք, որ սկսեցիք քաղաքացիական կռիւը Ռուսաստանում և բոլշևիկների յաղթական արշաւից ընկճուած դարձաք թուլամորթ, անկամ ու անճար: Այսօր ձեր կաչին փրկելու համար խունկ էք ծխում Խորհրդային Ռուսաստանին, սակայն, ո՞ւր է ձեր հերոսը՝ փառապանծ Քերենսկին — Փարիզում դաւեր է լարում խորհրդային իշխանութեան դէմ (աղմկալից ծափեր):

Ողջունում էք այժմ Հիւսէյնովին, այն մարդուն, որ յայտարարում է, թէ կարմիր բանակը արշաւում է հայ ժողովրդի վրա. դոնէ ամաչէք ժողովուրդ բառը գործածելուց: Կարծում էք միամտաբար, թէ Ազրբէջանում, իրօք, յեղաշրջում կատարուեց. «Մուսաւաթ»ն այնքան անաղո՞ր էր, որ այդպիսի հեշտութեամբ գիջեց իշխանութիւնը: Ասացէք խնդրեմ, ո՞րտեղ է տեսնուած այդպիսի բան. ես պնդում եմ, որ, այո՛, ա՛յդ կառավարութիւնն աւելի վատթար է, քան նախկինը: Զմոռանաք «Իթթիհատի»*) համագումարը, ուր պարզորէն արտայայտուեց նրանց կամքը — հրահրել համիսլամական շարժումը՝ ձեռք մեկնելով բոլշևիկներին:

Եւ դուք, թուլամորթ կուսակցութիւն, որ Ռուսաստանում գիւղացիութեան 80 տոկոսն ունէիք ձեր յետևից, չկարողացաք կառավարութիւն ստեղծել, այսօր յանդգնութիւն ունէք ասելու, թէ հասել է ժամը, որ Դաշնակցութիւնը հեռանայ իշխանութիւնից. ձեր մտքով երբեք չանցկացնէք, որ կարող էք մի օր երկրի դեկը ձեր ձեռքը վերցնել (բուռն ծափեր):

Արտաքին գործոց նախարարի մեղմ տոնը թող ձեզ չմոլորեցնի. այդ մեղմ տոնի յետևում կանգնած է հայ աշխատաւորութիւնն ու Դաշնակցութիւնը:

---

*) Խօսքը Ազրբէջանի «Իթթիհատ» համիսլամական կուսակցութեան մասին է, որը պաշտպանում էր խորհրդային իշխանութիւն յայտարարելու անհրաժեշտութիւնը՝ իսլամ ժողովուրդների շահերի տեսակէտից: